ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Հասցե՝** ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
**Էլ փոստ՝**info@ssa.am
**Հեռ.՝** (060) 654 013, (010) 52 15 94
**Մամլո քարտուղար՝** Տաթևիկ Խաչատրյան
**Հեռ.՝** (060) 654 011
**Հասարակայնության հետ**
**կապերի բաժնի պետ՝** Նոնա Սարգսյան
**Հեռ.՝** (060) 654 020, (095) 51 14 17

*Մամլո հաղորդագրություն*

### Հովհաննես Սահակյանը շնորհավորել է Գինեսի գրքի ռեկորդակիր 99-ամյա Մարիա Տոնոյանին՝ տոնական միամսյակի կապակցությամբ

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Հովհաննես Սահակյանը մարտի 13-ին այցելել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոց, շնորհավորելու կենսաթոշակառու 99-ամյա Մարիա Տոնոյանին, տոնական միամսյակի կապակցությամբ:

Մարիա Տոնոյանը Գինեսի գրքի ռեկորդակիր է: Նա 80 տարի դասավանդում է հարմոնիա առարկան Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում:

Շնորհավորելով գարնանային գեղեցիկ տոների կապակցությամբ՝ Ծառայության պետ Հովհաննես Սահակյանը նշել է, որ մանկավարժ լինելը առանձնահատուկ վերաբերմունք ու ձիրք է պահանջում, առանձնահատուկ հոգեբանություն և նվիրում: Նա իր խորին երախտագիտությունն է հայտնել տիկին Տոնոյանին այն ժամանակի համար, որ անշահախնդրորեն նվիրել է երեխաներին, այն գիտելիքի համար, որ սերնդեսերունդ փոխանցել է իր աշակերտներին:

Շնորհակալություն հայտնելով անակնկալ այցելության համար՝ Մարիա Տոնոյանը ներկաներին խորհուրդ է տվել շատ մարզվել, հաճախ զբոսնել, շփվել հաճելի մարդկանց հետ և գնահատել գեղեցիկը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով՝ Հովհաննես Սահակյանը մաղթել է քաջառողջություն, բարեկեցություն ու լավատեսություն: